cies in the area of educational system management, the economic basis of educational system, and social guarantees. Following the loan agreement of 1998 between the World Bank and the Armenian government, the educational system started undergoing its first serious reform. The "Education Financing and Management Reform" loan project was worth $15 million. The reforms implemented within the framework of this project are better known as "optimization" (the word "optimization" was derived from the Latin "optimus", which means effective, raise of effectiveness, improvement). In the period of 1999-2003, 37 schools were closed in Armenia. The small schools were merged with the large ones, and large-scale cuts of teacher positions took place. The school funding mechanism was altered as well. The transition was made from classroom financing to one based on the pupil/number financing mechanism. The teachers who were relieved of their duties either received a payment of $500 from the World Bank or were sent to re-qualification training (accounting, various computer programs, etc.). As a result of the reforms, the school management was decentralized. During the period of 1999-2004, all schools in the country adopted the new system of School Council management. The School Council is the supreme body of school management. It is the collegial cooperative body in its nature, which includes parents, teachers, and community representatives.

The next important direction of the reform was the text book compilation process, which was performed through the means of competitive tender. As a result, the majority of school text books were updated both in terms of content and design, which greatly contributed to the increase of learning effectiveness.

In general, 85 text books and 34 teacher manuals were published and distributed to schools. In 2008, the Armenian government approved the "Strategic Program of High School System Foundation". After that, Armenia made a transition to a 12-year public education system, and in the 2009-2010 academic year, three-year high schools were created. The mission of the high school is to provide for:

- the ability of the pupils to conduct independent life, and
- the opportunity to receive relevant initial, secondary or higher professions education based on inclinations, abilities, capacities, and preferences.

Armenia joined the Bologna process in 2005 by also setting the foundation for the higher education system reforms.

Currently, the education system in Armenia includes:

- pre-school education,
- general secondary education, comprised of elementary schools, secondary or general schools and high schools,
- initial vocational, secondary vocational and higher education,
- post-graduate education,
- the institutions aimed at providing and raising qualification,
- the institutions aimed at providing evaluation and educational services.

Կրթական համակարգի զարգացումը Հայաստանում

Հեղինակ՝ Ալեքսանդր Արամյան

Խորհրդային շրջան

Հայաստանի կրթական համակարգն ունի 1600 տարվա պատմություն, սակայն ժամանակակից կրթության հիմունքները դրվել են Հայաստանի առաջին հանրապետության օրոք (1918-1920): Այդ ժամանակ էլ ստեղծվում է կրթության համակարգը ղեկավարող առաջին պետական գերատեսչությունը՝ հանրային կրթության մինիստրությունը; Խորհրդային Միությունում կրթության պետական քաղաքականությունն ավելի ամբողջական տեսք է ստանում: Արդեն 1920-ական թվականների սկզբին իրականացվում են երկու կարևոր քայլեր՝ դպրոցն առանձնացվում է եկեղեցուց և կրթության ողջ համակարգը պետականացվում է: ԽՍՀՄ կառավարությունը ստանձնում է հստակ պարտավորություն՝ բոլոր քաղաքացիների համար ապահովել անվճար կրթություն: Կարևոր հանգամանքը այն էր, որ հայերենը ճանաչվեց պետական լեզու, ու կրթական ծրագրերը կառուցվեցին հայերենի հիման վրա:

Պարտադիր տարրական կրթությունը մտցվում է 1932 թ.՝ յոթամյա տարրական դպրոցների բազայի վրա: Այդ նպատակով գյուղական վայրերում կառուցվում են մոտ 400 տարրական դպրոցներ: ԽՍՀՄ 70 տարիների ընթացքում ստեղծվում է կրթական հաստատությունների լայն ցանց, որն ընդգրկում էր նախադպրոցական հիմնարկները, միջնակարգ դպրոցները, հատուկ մասնագիտացած դպրոցները, բուհերը: Գործնականում՝ արդեն 1970-ական թվականներին լրիվ միջնակարգ կրթությունը (10-ամյա) հասու էր բոլորին, իսկ մյուս տիպի կրթական հաստատությունները՝ բնակչության մեծամասնությանը: Խորհրդային Միությանը կարճ ժամանակահատվածում հաջողում է վերացնել անգրագիտությունը Հայաստանի նույնիսկ հեռավոր, լեռնային բնակավայրերում: Անկախացումից առաջ Հայաստանում կային 1367 ցերեկային հանրակրթական դպրոցներ՝ մոտ 600 հազ. աշակերտով և 47 հազ. ուսուցիչներով: Բացի այդ՝ գործում էին նաև երեկոյան և երկարօրյա (գիշերօթիկ) դպրոցներ:

1920 թ. հիմնվել է Երևանի պետական համալսարանը՝ սկզբնավորելով բուհական կրթության զարգացումը Հայաստանում: 1986-87 ուսումնական տարում Հայաստանում գործել է 13 բուհ՝ 60 հազար ուսանողով և 5389 դասախոսով:

Ժամանակի ընթացքում խորհրդային կրթական համակարգում արմատավորվեցին մի շարք բացասական երևույթներ: Կրթական հաստատություններն ու ծրագրերը դիտվում էին որպես կոմունիստական քարոզչության գործիք, համարյա բոլոր հումանիտար առարկաները այս կամ այն չափով ենթարկեցվում էին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքից բխող դոգմաներին: Ակնհայտորեն՝ խորհրդային կրթական հաստատությունները չափից ավելի քաղաքականացվեցին, ինչը չէր նպաստում կրթության արդյունավետության բարձրացմանը: Գնահատման համակարգը հեռու էր կատարյալ լինելուց, բացակայում էր մրցակցությունը, սովորողների զգալի մասը բավարար մոտիվացիա չուներ գիտելիքներն ավելացնելու համար: Արդեն 80-ականներին պարզ էր, որ կրթական համակարգն ի վիճակի չի բավարարել որակյալ ինժեներների, տնտեսագետների, մենեջերների ու մի շարք այլ մասնագիտությունների գծով տնտեսության կողմից առաջադրվող պահանջները: Միջազգային չափանիշներով մրցունակ էին միայն բնագիտական որոշ ծրագրեր, սակայն գիտության ու արտադրության միջև ստեղծվել էր անջրպետ, որը գնալով խորանում էր: Կրթական համակարգն ակնհայտորեն բարեփոխումների կարիք ուներ, սակայն այդ առաքելությունը ստիպված էին իրենց վրա վերցնել նորանկախ Հայաստանի իշխանությունները:

Անկախության շրջան

Անկախացումից հետո Հայաստանի կրթական համակարգը զարգանում էր տարերայնորեն: Մինչև 90-ական թվականների վերջը համակարգում որևէ լուրջ ծրագիր չի իրականացվել: Այդ շրջանը կարելի է բնորոշել որպես ոլորտի մասնավորեցման շրջան: Ի հայտ եկան բազմաթիվ ոչ պետական ու վճարովի կրթական հաստատություններ, հատկապես՝ բարձրագույն կրթական համակարգում: Բացի այդ՝ պետությունը հրաժարվեց պետական բուհերի 100-տոկոսանոց ֆինանսավորումից՝ այն փոխարինելով պետական պատվերի մեխանիզմով: Պետական բուհերը 90-ական թվականների կեսերին վերածվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ ինքնաֆինանսավորման հնարավորությամբ:

Ավելին՝ 1995 թ. ընդունված Սահմանադրությամբ Հայաստանը քաղաքացիներին երաշխավորեց միայն միջնակարգ անվճար կրթությունը: Ներկայում գործող Սահմանադրության 39 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, սակայն միջնակարգ կրթությունն անվճար է միայն պետական հաստատություններում: Այսպիսով՝ Սահմանադրությունը չի արգելում ոչ պետական ու վճարովի միջնակարգ դպրոցների գոյությունը: Քաղաքացիներին Սահմանադրությամբ տրված է նաև անվճար բուհական կրթություն ստանալու իրավունք, սակայն՝ մրցակցային հիմունքներով:

1999 թ. Հայաստանում ընդունվեց «Կրթության մասին» օրենքը, որում սահմանվեցին կրթության ձևերը, ուսումնական հաստատությունների տիպերն ու կարգավիճակնե-

րը, կրթական համակարգի կառավարման բնագավառում տարբեր մարմինների իրավասությունները, կրթական համակարգի տնտեսական հիմքերը, սոցիալական երաշխիքները: Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում 1998 թ. սկսվեցին կրթական համակարգի առաջին լուրջ բարեփոխումները: «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումների» վարկային ծրագիրը 15 մլն դոլար էր: Ծրագրով իրականացված բարեփոխումներն ավելի շատ հայտնի են «օպտիմալացում» անվամբ (օպտիմալացում բառն առաջացել է լատիներեն «optimus» բառից, որը նշանակում է արդյունավետ, արդյունավետության բարձրացում, լավացում): 1999-2003 թթ. ՀՀ-ում 37 դպրոցներ փակվեցին: Փոքր դպրոցները միացվեցին խոշոր դպրոցներին, տեղի ունեցան ուսուցչական հաստիքների մեծ կրճատումներ: Փոխվեց նաև դպրոցների ֆինանսավորման մեխանիզմը՝ դասարանների ֆինանսավորումից անցում կատարվեց աշակերտ/թիվ ֆինանսավորման մեխանիզմին: Այն ուսուցիչներին, ովքեր ազատվել էին աշխատանքից, Համաշխարհային բանկը կամ տալիս էր միանվագ 500 դոլար, կամ ուղարկում վերաորակավորման դասընթացների (հաշվապահություն, համակարգչային տարբեր ծրագրերի դասընթացներ և այլն):

Բարեփոխումների շրջանակներում ապակենտրոնացվեց դպրոցների կառավարումը: 1999-2004 թվականների ընթացքում հանրապետության բոլոր դպրոցները անցան Դպրոցական խորհուրդներով կառավարման նոր համակարգին: Դպրոցական խորհուրդը դպրոցի կառավարման բարձրագույն մարմինն է: Այն իր գործունեության բնույթով կոլեգիալ համագործակցային մարմին է, որում ընդգրկված են ծնողներ, ուսուցիչներ, համայնքի ներկայացուցիչներ:

Բարեփոխումների հաջորդ կարևոր ուղղություններից մեկը դասագրքաստեղծման գործընթացն էր: Այն իրականացվեց մրցույթի (tender) միջոցով: Արդյունքում՝ դպրոցական դասագրքերի մեծ մասը թարմացվեցին և բովանդակային, և ձևի առումով: Սա մեծապես նպաստեց դպրոցական ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ընդհանուր առմամբ հրատարակվել և դպրոցներին են բաշխվել 85 անուն դասագիրք և 34 անուն ուսուցչի ձեռնարկ:

ՀՀ կառավարությունը 2008 թ. հաստատեց «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»: Ըստ այդմ Հայաստանն անցում կատարեց 12-ամյա հանրակրթական համակարգին, 2009-10 թթ. ուսումնական տարում ձևավորվեցին եռամյա ավագ դպրոցները: Ավագ դպրոցի առաքելությունն է ապահովել.

- սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու,
- հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

2005 թ. Հայաստանը միացավ Բոլոնյան գործընթացին՝ սկիզբ դնելով նաև բարեփոխումներին բարձրագույն կրթական համակարգում:

- Ներկայում Հայաստանի կրթական համակարգը ներառում է՝
- նախադպրոցական կրթությունը,
- ընդհանուր միջնակարգ կրթությունը՝ կազմված տարրական, միջին կամ հիմնական և ավագ դպրոցից,
- նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը,
- հետբուհական կրթությունը,
- մասնագետների վերաորակավորման և որակավորման բարձրացման հաստատությունները,
- գնահատման և կրթական ծառայություններ առաջարկող հաստատությունները:

GEOTEAM

LYDIAN INTERNATIONAL

Education and Local Capacity Building are an Integral Part of Amulsar Social Development Projects

Amulsar: responsible mining, sustainable development.

Lydian International Ltd. (Lydian) through its fully-owned subsidiary in Armenia, Geoteam CJSC, have started social development initiatives for adjacent communities to the Amulsar gold project long before the planned start of the mine construction in April 2015.

Since 2008, the company has invested more than AMD 455 mln drams in various social development projects related to infrastructure, healthcare, agriculture and education in the surrounding communities.

Capacity building is an integral component of these projects. Corporate Social Responsibility for Geoteam is more than involvement in social development initiatives. It's first and foremost carrying out the core business of mining in an environmentally and socially responsible manner. That also implies leaving lasting benefits for the communities where education and skills development are the most tangible benefits for the communities. Our goal is also to improve livelihood in the villages.

Nara Ghazaryan, Geoteam Social Development Projects Manager emphasizes that building technical capacities of local people by using their resources most efficiently is key towards development. On practical level, this approach implies training and skills learning component in different development programs. In some of these programs local people are using new technologies and methods in agriculture or animal husbandry to better serve local resources. On the same note, social projects emphasize awareness for the local population on different topics such as primary health care, healthy life style, etc.

The Company's approach on education and training is also reflected in its student scholarship program that has long term implications for local communities. The idea behind this program is to raise capacity of young specialists who could be geologists, mining engineers, environmental specialists, coming from local communities. They will work for the Company, and more importantly, obtain knowledge and awareness that will serve them well beyond employment with the Company. Since 2011, 12 young people from adjacent communities have been studying mine engineering and geology at Yerevan State and Engineering Universities. They are able to practice their knowledge on the ground at Geoteam.

Mkrtich Karapetyan, resident of Gorayk community will get his diploma of a geologist this year.

"I am glad I will become a geologists", he says, "When the operations at Amulsar start, I'll be happy to stay in the village and work in the company. I don't want to leave my home. I was born here and I like working in the mountains".

Eduard Arshakyan, resident of another, nearby community is studying mining engineering as well:

"I like this profession and that is why I am thinking of obtaining a degree", he says, "I hope I will have the opportunity to work at Amulsar project".

Nara Ghazaryan continues by emphasizing that education and capacity building are integral part of many social initiatives in the communities which cover young people, adults and children.

"We have chosen to invest in youth and children education because we want to work and partner with local communities, with a focus on developing human resources through training. The Company deploys various tools and means for this to happen: sport, arts, organized classes. For example, we have been supporting sport and summer camp program for children for the last 3 years, as well as projects to foster environmental education. We launch this year "young technik" program whereby village teacher organizes after-hour classes for teenagers to learn technical skills. It includes children's choir in Jermuk and dance classes in 2 communities now – all accepted with great enthusiasm in beneficiary communities.

Հիփոթեքային վարկ
20 տարի 10%
Քո երազած տունը դարձրու իրական
BYBLOS BANK
(010) 53 88 18 . byblosbankarmenia.am

GEOTEAM

LYDIAN INTERNATIONAL

Կրթությունը եւ համայնքներում հմտությունների զարգացումը Ամուլսարի սոցիալական զարգացման ծրագրերի կարեւոր մասն են

Լիդիան Ինթերնեյշնլ ընկերությունը իր դուստր՝ «Գեոթիմ» ՓԲԸ-ի միջոցով Ամուլսարի ոսկու հանքի հարակից համայնքների համար սկսել է իրականացնել սոցիալական զարգացման ծրագրեր հանքի կառուցման մեկնարկից շատ ավելի վաղ: Հանքի կառուցումը նախատեսված է սկսել 2015թ.-ին:

2008թ.-ից սկսած ընկերությունը հարակից համայնքներում ներդրել է ավելի քան 455 մլն դրամ, մասնավորապես՝ ենթակառուցվածքներին, առողջապահությանը, գյուղատնտեսությանը և կրթությանը վերաբերող տարբեր սոցիալական զարգացման ծրագրերում:

Տեղի բնակչության ներուժի և հմտությունների զարգացումը այս ծրագրերի անբաժան բաղադրիչն է: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը Գեոթիմի համար ավելի լայն հասկացություն է քան միայն սոցիալական զարգացման ծրագրերը: Ընկերության համար ամենակարևորը հիմնական գործունեության՝ հանքարդյունաբերության, բնապահպանական և սոցիալական տեսանկյունից պատասխանատու իրականացումն է: Դա նաև ենթադրում է համայնքների համար նոր հնարավորությունների ընձեռում, որտեղ կրթությունը և հմտությունների զարգացումը ամենակարևոր արդյունքներից են: Ընկերությունը նպատակ ունի այսպիսով նպաստել Ամուլսարի շրջակա համայնքներում կենսամակարդակի շարունակական բարելավմանը:

Գեոթիմի սոցիալական զարգացման ծրագրերի ղեկավար Նառա Ղազարյանը, ընդգծում է, որ համայնքների բնակիչների տեխնիկական հմտությունների խթանումը, տեղի ներուժի արդյունավետ օգտագործումը համայնքներում զարգացման գրավականն է: Գործնականում այս մոտեցումը ենթադրում է զարգացման տարբեր ծրագրերում վերապատրաստումների և հմտությունների ուսուցման հնարավորություններ: Ծրագրերից մի քանիսն ուղղված են գյուղատնտեսության և անասնաբուծության մեջ նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ուսուցմանն ու ներդրմանը: Նույն կերպով, սոցիալական ծրագրերը ներառում են տեղական բնակչության իրազեկումը այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են առողջության առաջնային պահպանումը, առողջ ապրելակերպը և այլն:

Կրթության և վերապատրաստման նկատմամբ ընկերության մոտեցումը առավել արտահայտված է ուսանողական կրթաթոշակների տրամադրման ծրագրում, որը համայնքների համար երկարաժամկետ արդյունք է ապահովելու: Այս ծրագրի հիմքում ընկած է երիտասարդ մասնագետների հմտությունները զարգացնելու գաղափարը, որոնք կարող են ապագայում դառնալ երկրաբաններ, լեռնահանքային

ինժիներներ, բնապահպանության ոլորտի մասնագետներ: Երիտասարդները Ամուլսարի շրջակա համայնքների բնակիչներ են: Երբ Ամուլսարի հանքը սկսվի շահագործվել, նրանք կաշխատեն ընկերությունում, և որ ամենակարևորն է, ձեռք կբերեն գիտելիքներ որոնք կարող են կիրառել նաև հետագայում: 2011, 2012թթ.-ից հարակից համայնքներից 12 երիտասարդներ լեռնահանքային ճարտարագիտություն և երկրաբանություն են սովորել Երևանի պետական և Ճարտարագիտական համալսարաններում: Նրանք հնարավորություն կունենան գործնականում կիրառել իրենց գիտելիքները Գեղթիմում:

Գորայք համայնքի բնակիչ Մկրտիչ Կարապետյանը այս տարի կստանա երկրաբանի իր դիպլոմը: «Ես ուրախ եմ, որ դառնալու եմ երկրաբան», - ասում է նա: «Երբ Ամուլսարի հանքը սկսի շահագործվել, ես ուրախ կլինեմ մնալ գյուղում և աշխատել ընկերությունում: Չեմ ուզում լքել իմ տունը: Ես այստեղ եմ ծնվել և սիրում եմ աշխատել սարերում»:

Էդուարդ Արշակյանը նույնպես համայնքի բնակիչ է և նույնպես սովորում է լեռնահանքային ճարտարագիտություն:

«Ես սիրում եմ այս մասնագիտությունը և ուզում եմ այս մասնագիտությամբ աստիճան ձեռք բերել: Հույս ունեմ, որ կունենամ Ամուլսարի ծրագրում աշխատելու հնարավորություն», - ասում է նա:

Նառա Ղազարյանը, շեշտում է, որ կրթությունը և հմտությունների զարգացումը սոցիալական նախաձեռնությունների անքակտելի մասն են կազմում: Համայնքներում տարբեր կրթական ծրագրերում ընգրկված են ոչ միայն երիտասարդներ, այլև մեծահասակներ և իհարկե երեխաներ:

«Մենք ներդնում ենք երիտասարդների և երեխաների կրթության մեջ, որովհետև ցանկանում ենք աշխատել և համագործակցել համայնքների հետ՝ շեշտը դնելով վերապատրաստումների միջոցով տեղի մարդկային ռեսուրսների զարգացման վրա: Այս նախաձեռնությունն իրագործելու համար ընկերությունը կիրառում է տարբեր միջոցներ և գործիքներ ՝ սպորտի, արվեստի, կազմակերպված դասընթացների տեսքով: Օրինակ, վերջին 3 տարիների ընթացքում մենք աջակցել ենք երեխաների համար սպորտային և ամառային ճամբարների ծրագրին, ինչպես նաև գյուղերում և Ջերմուկում բնապահպանական կրթության նախաձեռնությունների: Այս տարի մեկնարկելու է «երիտասարդ տեխնիկ» ծրագիրը, որի շրջանակներում գյուղի ուսուցիչը աշակերտների համար կկազմակերպի արտաժամյա դասընթացներ տեխնիկական հմտություններ ուսուցանելու նպատակով: Կրթական ծրագրերը նաև ներառում են Ջերմուկում երեխաների երգչախումբ և պարի դասընթացներ 2 համայնքներում: Այս ամենը շատ մեծ ոգևորությամբ է ընդունվում համայնքներում»:



The Bologna Process and Armenia

By Alexander Aramyan

General description of the Bologna process

On June 19, 1999, the Ministers of Education of 29 European countries signed the Bologna declaration (firstly, concerning higher education) for the purpose of harmonizing the educational systems of their countries. This process became known as the "Bologna process", the purpose of which was to create a common education space in Europe through the establishment of more transparent and comparable national educational systems. With the purpose of ensuring the educational systems` harmonization, it was decided to apply common education cycles (baccalaureate, magistracy), similar or easily recalculated education credit systems, and uniform ways of providing qualification in the countries that joined the Bologna declaration. Besides, the academic qualifications have to be mutually recognizable. The member countries assumed the responsibility to reconcile their national education systems with the Bologna declaration provisions until the year 2010. As of today, 47 countries have joined the Bologna process. Armenia joined the process in 2005, and assumed responsibility for implementing reforms in 10 areas. On March 12, 2010 during the Vienna conference, the European Higher Education Area officially commenced.

The changes implemented in the Armenian higher education system after joining the Bologna process

Initially, the Bologna declaration envisaged the two-level system of higher education. However, during the 2003 Berlin summit, it was suggested to recognize the doctoral qualifications as the third level.

It is important to note that the launch of the two-level education structure in Armenia started much earlier than the official commencement of the Bologna process (1999). It was first implemented in 1992 in the Armenian State Engineering University, where in 1994, there was also founded the third level of "researcher" integrated into the post graduate studies, thus setting a prototype of three-level system of higher education. A number of other large universities copied this structure at a later date. The implementation of evaluation credit system was more significant and innovative. In the case of the credit system, the multifactor system of evaluation shall be applied, and the student has to be evaluated not once or twice a year, but every day based on several components, as well as being required to pass exams several times a year.

The new learning system provides for a high degree of independence of the student. Thus, the student needs to have the opportunity to select the courses from a list of non-mandatory courses. In western countries, the student can also select his professors. Besides, the student needs to have the opportunity to conduct laboratory and practical work.

Following the decree of the Armenian government, the credit based system of learning was implemented in higher education institutions starting from the 2007-2008 academic years. However, up until now the new evaluation system has not been unanimously accepted by students and professors. The main drawback of the new evaluation system lies in the fact that computer calculation takes time and putting the final grade in the student`s record book is delayed for several days. Thus, the student is not immediately informed of the grade. This creates dissatisfaction among the students and to a certain extent, questions the transparency of the evaluation system. The appeal system too is being distorted. According to the students, the credit system in various higher education institutions is based on different criteria. For example, in one university the highest grade is 10, while in another one it is 20. The examination process is also different, with the specialty course credit being sometimes lower than non-specialty, which makes the student pay more attention to non-specialty courses. Besides, the credits need to be accumulated during the seminars as well, whereas not all universities provide for the seminars (the academic hours are limited, the auditorium is big and thus not everybody can get credits). However, the credit system has a big advantage of making the student work throughout the whole year instead of assuming the workload only before the exams, which was widely spread before.

© 2014 KPMG Armenia cjsc, a company incorporated under the Laws of the Republic of Armenia, a subsidiary of KPMG Europe LLP, and a member firm of the KPMG network of independent member firms affiliated with KPMG International Cooperative ("KPMG International"), a Swiss entity. All rights reserved. Printed in Armenia. Advertising 0+. The KPMG name, logo and "cutting through complexity" are registered trademarks or trademarks of KPMG International.

KPMG

cutting through complexity

What does it mean to be a leader?

- To understand your client's challenges and needs
- To think several steps ahead
- To invest in developing your intellectual potential

We help the biggest companies to achieve their goals and be successful

We know what it is to be a leader.

KPMG IN ARMENIA

kpmg.am

Բոլոնյան գործընթացն ու Հայաստանը

Հեղինակ՝ Ալեքսանդր Արամյան

Բոլոնյան գործընթացի ընդհանուր նկարագիրը

Եվրոպական 29 երկրների կրթության նախարարները 1999 թ. հունիսի 19-ին ստորագրեցին Բոլոնյան հռչակագիրը՝ կրթական համակարգերի (առաջին հերթին՝ բարձրագույն կրթության) հարմոնիզացիայի նպատակով: Այդ գործընթացը ստացավ «Բոլոնյան գործընթաց» անվանումը: Այն նպատակ ուներ Եվրոպայում միասնական կրթական տարածություն ստեղծել՝ առավելագույնս թափանցիկ և առավելագույնս համեմատելի ազգային կրթական համակարգերի միջոցով:

Կրթական համակարգերի հարմոնիզացումն ապահովելու համար որոշվեց Բոլոնյան հռչակագրին միացած երկրներում կիրառել միատեսակ կրթական ցիկլեր (բակալավրիատ, մագիստրատուրա), միանման կամ հեշտ վերահաշվարկի ենթարկվող կրթական կրեդիտների համակարգեր, որակավորման տրամադրման միատեսակ ձևեր: Բացի այդ՝ փոխա-

դարձաբար պետք է ճանաչվեն ակադեմիական որակավորումները: Անդամ երկրները պարտավորվեցին մինչև 2010 թ. իրենց ազգային կրթական համակարգերը համապատասխանեցնել Բոլոնյան հռչակագրի դրույթներին: Ներկա դրությամբ Բոլոնյան գործընթացին միացել են 47 երկրներ: Հայաստանն այդ գործընթացին միացել է 2005թ.՝ պարտավորվելով բարեփոխումներ իրականացնել 10 ուղղություններով: Վիեննայի համաժողովում 2010 թ. մարտի 12-ին պաշտոնապես մեկնարկեց Եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանը:

Հայաստանի բուհական համամարգում կատարված փոփոխությունները Բոլոնյան գործընթացին միանալուց հետո

Սկզբնական շրջանում Բոլոնիայի հռչակագիրը ենթադրում էր բարձրագույն կրթության 2 աստիճանների վրա հիմնված համակարգ: Սակայն 2003 թ. Բեռլինի գագաթաժողովում առաջարկվեց դոկտորական որակավորումները ճանաչել որպես երրորդ աստիճան:

Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության երկաստիճան կառուցվածքը Հայաստանում սկիզբ է առել շատ ավելի վաղ, քան Բոլոնիայի գործընթացի պաշտոնական մեկնարկը (1999թ.): Առաջին անգամ այն 1992թ.ներմուծվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, որտեղ 1994թ. հիմնվել է նաև ասպիրանտուրային ինտեգրված «հետազոտողի» երրորդ աստիճանը՝ սկզբնավորելով բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի նախատիպը: Մի քանի այլ խոշոր համալսարաններ հետագայում ընդօրինակել են այս կառուցվածքը:

Հայաստանի բուհական համակարգի համար առավել էական ու նորարարական էր գնահատման կրեդիտային համակարգի ներդրումը: Կրեդիտային համակարգի դեպքում պետք է կիրառվի գնահատման բազմագործոնային համակարգ, և ուսանողը պետք է գնահատվի ոչ թե տարին մեկ կամ երկու անգամ, այլ ամեն օր և մի քանի բաղադրիչներով, ինչպես նաև պետք է տարվա ընթացքում մի քանի անգամ քննություն հանձնի: Ուսուցման նոր համակարգը մեծ տեղ է տալիս ուսանողի ազատությանը և ինքնուրույնությանը: Ըստ այդմ՝ ուսանողը պետք է հնարավորություն ունենա առարկաների պարտադիր և ոչ պարտադիր ցանկից ընտրելու, թե որ առարկաները պետք է ուսումնասիրի: Արևմտյան երկրներում ուսանողը կարող է ընտրել նաև դասախոսներին: Բացի այդ, ուսանողին պետք է հնարավորություն տրվի ինքնուրույն իրականացնելու լաբորատոր և գործնական աշխատանքներ:

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ուսուցման կրեդիտային համակարգը բուհերում ներդրվել է 2007-2008 ուսումնական տարուց: Սակայն մինչ այսօր ուսանողների և դասախոսների շրջանում գնահատման նոր համակարգը միանշանակ չի ընդունվում: Գնահատման նոր համակարգի հիմնական թերությունն այն է, որ համակարգչով հաշվարկը ժամանակ է պահանջում, և վերջնական գնահատականի անցկացումը ստուգարքային գրքույկի մեջ մի քանի օրով ձգձգվում է, ուսանողն անմիջապես չի տեղեկանում ստացած գնահատականի մասին: Սա դժգոհություն է առաջացնում ուսանողների մոտ և, ինչ-որ իմաստով, գնահատման համակարգի թափանցիկությունը կասկածի տակ է առնվում: Խափանվում է նաև բողոքարկման գործընթացը: Ուսանողների գնահատմամբ՝ կրեդիտավորման համակարգը տարբեր բուհերում տարբեր չափանիշներ ունի: Օրինակ՝ մի տեղ առավելագույն գնահատականը 10-ն է, մյուս տեղում՝ 20-ը, տարբեր է քննությունների անցկացման կարգը, երբեմն մասնագիտական առարկայի կրեդիտն ավելի ցածր է, քան ոչ մասնագիտականինը, ինչև ստիպում է ուսանողին՝ ավելի շատ ուշադրություն դարձնել ոչ մասնագիտական առարկայի վրա:

Բացի այդ, կրեդիտներ պետք է հավաքել նաև սեմինարների ընթացքում, այնինչ բոլոր բուհերը չէ, որ ապահովում են սեմինարների պատշաճ անցկացում (դասաժամերը քիչ են, լսարանը՝ մեծ, հետևաբար՝ բոլորը չէ, որ կարողանում են բալեր հավաքել): Սակայն կրեդիտային համակարգն ունի մի մեծ առավելություն՝ այն ստիպում է ուսանողին աշխատել ողջ ուսումնական տարվա ընթացքում, այլ ոչ թե ծանրաբեռնվել միայն քննություններից առաջ, ինչը տարածված էր նախկինում:

TUFENKIAN

HERITAGE HOTELS



Nestled in the most charming villages
of the Armenian countryside

48 Hanrapetutyan str., 0001, Yerevan, Armenia
(+374 60) 50 10 10
www.tufenkian.am

CONCERN DIALOG LAW FIRM

Surety: Is It Rescue or Trap?

By Narine Beglaryan, Senior Lawyer, Attorney
"Concern-Dialog" Law Firm

In terms of finance, a surety or guaranty, is a legally binding promise by one party to assume responsibility for the debt obligation of a borrower in the case of any default or failure to pay the debt. In Armenia, the concept of surety as a legal mechanism has been applied more broadly in the cases of businesses and companies engaged in the fields of finance and bank within past 10-15 years.

A large amount of consumers' banking products utilize this tool, albeit not acknowledging the possible perils, however. It is noteworthy that the application of this tool has increased the risks not only for the consumer but for business as well.

Nevertheless, a little legal information is needed for consideration before presenting the risks. The Civil Code of the Republic of Armenia has enshrined the concept of surety as the security for ensuring the implementation of the debtor's obligations. Thus, surety is the secondary obligation, whose validity closely conforms to the validity of the main obligation. This rule can be practically exemplified by the following:

1. The surety is invalid due to the invalidation of the main obligation.

2. The statute of limitations of the surety is expired due to term limits or the expiration of the main contract (article 336 Civil Code of the Republic of Armenia -hereinafter as referred to CC). However, the correlation of the rule to be stipulated in Article 336 of CC and p. 4 of Article 382 of the CC is indicated on some contrast (which can be classified as the determination of special rule regarding the surety), which will be considered below.

The concept of surety is affiliated with the institutions of joint liability and secondary liability, i.e. it can be either joint or secondary respectively. The legislator determines the surety as joint liability unless the law or contract stipulates that the surety is secondary (Article 377 of CC).

The specific realities in Armenian society compel the use of surety cause, otherwise one can be estimated negatively (even in case of commercial organizations) and so the surety to be given without assessment of consequences and risks, which in turn is the result of unawareness of the joint and the secondary liabilities institutions.

To be signing the surety contract the guarantor does not comprehend that in this way the creditor will be entitled to demand implementation simultaneously from the guarantor and the debtor. To paraphrase in common language in this case, the guarantor is equaled to the creditor actually.

Moreover, the procedure of bankruptcy against the debtor cannot be influenced on the implementation of the guarantor's obligations to be determined in the surety contract, the moratorium of the demand of the creditor on the implementation from the guarantor is unable to follow as well.

Admittedly, if the guarantor fulfills the obligation of the debtor in respect of the creditor, the right to demand of the creditor is also thereby assigned. Nevertheless, judging by my own experience, the guarantors prefer to avoid judicial procedures or the debtor is so unable to pay that the guarantor will celebrate the "paper" victory, i.e. the decision in favor of the guarantor cannot be enforced.

The issue of secondary liability in the surety contracts is scarcely applied as far as the interests of the creditors are not overwhelmingly corresponding. As for secondary liability, the demand on implementation of the obligation can be made to the guarantor if previously it had been made to the debtor who declined or if the respond was not sent within a reasonable time. Therefore, the secondary liability of the guarantor is the peril of the creditor not to gain implementation of the obligation.

The surety contract shall be signed in written form, but not obligatory in a separate contract, i.e. it can be incorporated into the main contract.

As for the amount of obligations to be secured, the issues can arise for both the guarantor and the creditor. To be signing the surety contract the guarantor shall thoroughly acknowledge the amount of obligation to be secured; simultaneously, the creditor shall be ensured that the contract contains the precise obligation to be anticipated for the surety. Practically not a few cases when the creditor attempts to demand on implementation from the guarantor of more obligation than to be stipulated in the surety contract and awareness of the guarantor enables one to avoid an additional burden of obligation.

Moreover, the conditions of obligations to be secured are paramount as well, as far as there are any essential circumstances owing to which the guarantor entered into the surety contract. In case of any alteration thereof, the guarantor will be entitled to demand the termination of the surety contract. The risk of the latter is on the creditor which can be reduced via gaining the agreement of the guarantor or through the stipulation of alternative regulations.

Not to neglect the ground of the surety contract termination as far as to be applying inappropriately can be hazardous for both the guarantor and the creditor.

The article 382 of the CC is determined that the surety shall be terminated:

1) with the termination of the obligation secured and also in case of a change without permission of the guarantor in this obligation entailing an increase in liability or other unfavorable consequences for it;

2) with a transfer to another person of a debt under an obligation secured by the surety if the guarantor did not give the creditor consent to be liable for the new debtor;

3) if the creditor has refused to accept proper performance offered by the debtor or the guarantor;

4) at the expiration of the time period for which was indicated in the contract. If such a time period was not established, the surety shall be terminated unless the creditor brings suit against the guarantor within a year from the day of occurrence of the time for performance of the obligation secured by the guarantor. When the time period for performance of the principal obligation is not indicated and cannot be determined or is determined by the time of demand, the surety shall be terminated unless the creditor brings a suit against the guarantor within two years from the day of conclusion of the surety contract.

To simplify the above, the guarantor to receive the demand of the creditor shall check whether the main contract is in force, otherwise the guarantor will be at risk of fulfillment of expired contract. The alteration of the main contract shall be previously agreed with the guarantor by the creditor, especially if the amount of the liability of the guarantor is increased or other adverse influences on the guarantor arise, otherwise, the guarantor may file suit against the creditor and so the liability of the debtor becomes unsecured.

The consent of the guarantor shall be exercised in the case of transferring the debt to a third entity, moreover, the surety contract can include such a condition, in other cases, the creditor put at risk not only its interests, but the interests of the third entity to whom the debt is transferred.

The creditor shall not refuse to accept implementation of the obligation either from the guarantor or the debtor; otherwise the security will cease legal existence.

If the period of validity is set forth in the surety contract the latter ends thereafter.

If the period of validity is determined in the surety contract and the creditor does not file suit against the guarantor within a year after the date of implementation of the main obligation, the surety ends thereafter. But if the period of validity is not stipulated in the main contract and cannot be determined or be defined upon request and the creditor does not file suit against the guarantor within two years after the date of signing the surety contract then the surety ends thereafter as well.

Thus, it can be concluded that despite the period of terms to be stipulated in the article 336 of CC the demand against the guarantor can be made based on the validity of the surety contract, i.e. the terms to be determined in the part 4 of the article 382 of the CC, which can be called the special statute of limitations as well.

Overall, the expediency of giving the surety shall be estimated generally as well as the surety contract shall be read and acknowledged before entering into it, why not forwarding the schemes of regulation more favorable for the guarantor. Thus, the above mentioned not only concerns individuals but also involves legal entities and private entrepreneurs. Obviously, not every legal entity or private entrepreneur is to be rendered legal services or employs the lawyer. Therefore, individuals, legal entities and private entrepreneurs are at the same risk of failure. In case the surety contract has been already signed, the constant monitor shall be appealed toward the implementation of obligation either the guarantor or the creditor or the debtor and if feasible to agreed the following moves with the lawyers as far as it can be for the safety of the guarantor. However, at any case the surety contract cannot be without any consequences for the guarantor who shall always be ready that the debtor may not pay the debt and the creditor may demand from the guarantor full recovery.

CONCERN DIALOG LAW FIRM

Երաշխավորություն. փրկություն թե՞ ծուղակ

Հեղինակ՝ Նարինե Բեգլարյան, «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական ընկերություն, ավագ իրավաբան, փաստաբան

Երաշխավորությունը՝ որպես իրավական ինստիտուտ Հայաստանի Հանրապետությունում առավել լայն կիրառություն է գտել ֆինանսա-բանկային ոլորտում հատկապես վերջին տասը-տասնհինգ տարիների ընթացքում: Բանկային ապրանքների սպառողներից շատերն են առնչվում այս գործիքի հետ, շատ հաճախ չգիտակցելով հնարավոր ռիսկերի մասին: Հատկանշական է, որ գործիքի կիրառման ընթացքում ռիսկերը առաջանում են ոչ միայն սպառողի, այլ նաև բիզնեսի համար:

Մինչ ռիսկերին անցնելը, մի փոքր իրավական տեղեկատվություն երաշխավորության մասին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է երաշխավորությունը որպես պարտավորության ապահովման միջոց: Սա նշանակում է, որ երաշխավորությունը ածանցյալ պարտավորություն է, որի վավերությունը սերտ կապված է հիմնական պարտավորության վավերության հետ: Այս կանոնի պրակտիկ կիրառության օրինակները հետևյալ են.

1. եթե անվավեր է ճանաչվել հիմնական պարտականությունը, ապա անվավեր է նաև երաշխավորությունը,
2. եթե լրացել է հիմնական պարտավորության վաղեմության ժամկետը, լրացել է նաև երաշխավորության վաղեմության ժամկետը (ՀՀ քաղ. օր. հոդված 336): Ընդ որում, ՀՀ քաղ. օր. 336 հոդվածում ամրագրված կանոնի և ՀՀ քաղ. օր. 382 հոդվածի 4-րդ մասի համադրությունը առաջ է բերում որոշակի հակադրություն (որոշ իրավաբանների կողմից կարող է որակվել նաև որպես երաշխավորության համար հատուկ կանոնի սահմանում), որին անդրադարձը ստորև է:

Երաշխավորության ինստիտուտը փոխկապակցված է նաև համապարտ և սուբսիդիար պատասխանատվության ինստիտուտների հետ, այսինքն կարող է լինել կամ համապարտ, կամ սուբսիդիար: Օրենսդիրն ամրագրում է, որ երաշխավորությունը համապարտ է, եթե պայմանագրով կամ օրենքով նախատեսված չէ, որ այն սուբսիդիար է (ՀՀ քաղ. օր. 377):

Հայկական իրականությունն այնպիսին է, որ երաշխավորությունը տրվում է վատամարդ չհամարվելու կամ չդառնալու համար (անգամ առևտրային ընկերությունների դեպքում), առանց հաշվի առնելու դրա հետևանքներն ու ռիսկերը, որն էլ իր հերթին հետևանքն է համապարտ և սուբսիդիար պատասխանատվության ինստիտուտների չիմացության: Երաշխավորը կնքելով համապարտ պատասխանատվության երաշխավորության պայմանագիրը չի գիտակցում, որ սա նշանակում է, որ պարտատերը կարող է կատարման պահանջ ներկայացնել միաժամանակ և երաշխավորին և պարտապանին, այսինքն՝ կենցաղային լեզվով ասված այս դեպքում երաշխավորը ըստ էության հավասարեցվում է պարտապանին: Ավելին, անգամ եթե պարտապանի նկատմամբ առկա է սնանկության գործընթաց դա չի ազդում երաշխավորի երաշխավորության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա, ինչպես նաև չի հանգեցնում երաշխավորի նկատմամբ պարտատիրոջ պահանջի իրավունքի սառեցմանը:

Իհարկե, երաշխավորը, որը կատարել է պարտապանի պարտավորություն պարտատիրոջ նկատմամբ, պահանջի իրավունք է ձեռքբերում այդ պարտապանի նկատմամբ, սակայն իմ փորձը ցույց է տալիս, որ կամ այսպիսի երաշխավորները խուսափում են դատական գործընթացներից կամ պարտապանը անվճարունակ է այնքան, որ երաշխավորի հաղթանակը լինելու է թղթային՝ վճիռ, որը կմնա չկատարված:

Սուբսիդիար պատասխանատվության երաշխավորության պայմանագրերն առավել հազվադեպ են, քանի որ լիարժեք չեն համապատասխանում պարտատիրոջ պահանջներին: Այս դեպքում կատարման պահանջ երաշխավորին կարող է ներկայացվել, եթե պարտապանին պահանջը ներկայացվել է, սակայն նա այն չի բավարարել կամ ողջամիտ ժամկետում պարտատերն իր պահանջի պատասխանը չի ստացել: Այսպիսով, երաշխավորի սուբսիդիար պատասխանատվությունը դա պարտատիրոջ բավարարում չստանալու հնարավոր ռիսկն է:

Երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, բայց ոչ անպայման առանձին պայմանագրի տեսքով, այլ օրինակ ինկորպորացված հիմնական պայմանագրում:

Երաշխավորության ծավալի հետ խնդիրներ կարող են ծագել թե՛ երաշխավորի և թե՛ պարտատիրոջ համար: Երաշխավորը պայմանագիրը ստորագրելուց առաջ պետք է հստակ հասկանա, թե ինչ ծավալով պարտավորությունների համար է տալիս երաշխավորություն, իսկ պարտատերը՝ որ պայմանագրում հստակ նշված է այն ծավալը, որը պետք է երաշխավորվի: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ պարտատերը փորձել է երաշխավորից պահան-

ջել ավելին, քան նախատեսված է եղել պայմանագրով և միայն երաշխավորի իրազեկությունն է, որ վերջինիս թույլ է տվել խուսափել լրացուցիչ պարտավորության բեռից:

Բացի այդ կարևոր է նաև, թե ինչ պայմաններով պարտավորության համար է երաշխավորությունը տրվել, քանի որ դրանք են այն էական հանգամանքները, որոնցից ելել է երաշխավորը պայմանագիրը կնքելիս: Եթե այդ պայմանները փոփոխվում են, ապա երաշխավորն իրավունք ունի պահանջել երաշխավորության պայմանագրի լուծում: Այս դեպքում ռիսկը պարտատիրոջ վրա է, որը կարող է այն նվազեցնել նախորոք համաձայնեցնելով հիմնական պարտավորության փոփոխությունը երաշխավորի հետ կամ երաշխավորության պայմանագրով նախատեսել այլընտրանքային կարգավորումներ:

Երաշխավորության պայմանագիրը կնքելիս չպետք է մոռանալ դրա դադարման հիմքերի մասին, որոնց ոչ պատշաճ կիրառությունը ռիսկային է թե՛ երաշխավորի և թե՛ պարտատիրոջ համար:

ՀՀ քաղ. օր. 382 հոդվածը նախատեսում է, որ երաշխավորության պայմանագիրը դադարում է.

1. դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների.

2. երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար.

3. եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը.

4. երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է: Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել: Այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

Եթե պարզեցնենք, ապա երաշխավորը պարտատիրոջ պարտավորությունը ստանալիս պետք է ստուգի արդյոք դեռ գործում է հիմնական պարտավորությունը, այլապես նա ռիսկի է դիմում կատարել դադարած պարտավորություն: Պարտատեր հիմնական պարտավորությունը փոփոխելուց առաջ, հատկապես եթե դրա արդյունքում մեծանում է պարտավորությունը կամ էլ առաջանում է երաշխավորի համար այլ անբարենպաստ հետևանք, պետք է համաձայնեցնի փոփոխությունը երաշխավորի հետ, հակառակ դեպքում երաշխավորը կվիճարկի երաշխավորության պայմանագիրն ու պարտատերը կմնա առանց ապահովման միջոցի: Պարտքն այլ անձին փոխանցելիս պետք է առկա լինի երաշխավորի համաձայնությունը, ընդ որում դա կարող է նախատեսվել նաև երաշխավորության պայմանագրի դրույթներով, հակառակ դեպքում պարտատերը վտանգում է ոչ միայն իր շահերը, այլ նաև այն անձի, որին փոխանցում է պարտքը: Պարտատերը չպետք է հրաժարվի պարտավորության կատարման ընդունումից, անկախ նրանից, թե արդյոք դա պարտապանի թե երաշխավորի կողմից է կատարվում, այլապես ապահովման միջոցը կդադարի իրավական գոյությունը:

Եթե պարտատերը երաշխավորության պայմանագրով նախատեսել է գործողության ժամկետ, ապա դրա ավարտով պայմանագիրը կդադարի: Եթե պայմանագրով գործողության ժամկետ կողմերը չեն նախատեսել, իսկ պարտատերը հիմնական պարտավորության կատարման ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում հայց չի ներկայացրել երաշխավորի դեմ, ապա երաշխավորությունը դադարում է: Իսկ եթե հիմնական պայմանագրով կատարման ժամկետ նախատեսված չէ և չի կարող որոշվել կամ նախատեսված է ցպահանջ, իսկ պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի ներկայացրել, ապա կրկին երաշխավորությունը դադարում է: Այսինքն, ստացվում է անկախ ՀՀ քաղ. օր. 336 հոդվ. նախատեսված հայցային վաղեմության ժամկետից, պահանջ երաշխավորի դեմ կարող է ներկայացվել քանի դեռ այն չի դադարել, այսինքն ՀՀ քաղ. օր. 382 հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետներում, որոնք միգուցե կարող ենք անվանել նաև հայցային վաղեմության հատուկ ժամկետներ:

Այսպիսով, որպես երաշխավոր հանդես գալուց առաջ անհրաժեշտ է գնահատել դրա նպատակահարմարությունը, երաշխավորության պայմանագիրը ստորագելուց առաջ կարդալ և հասկանալ այն, ինչպես նաև առաջ քաշել երաշխավորի համար առավել բարենպաստ կարգավորման մեխանիզմներ: Ընդ որում, խոսքը ոչ միայն վերաբերում է ֆիզիկական անձ երաշխավորներին, այլ նաև այլ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին: Գաղտնիք չէ, որ իրավաբանական ծառայություններից օգտվում են կամ իրավաբան աշխատակից ունեն ոչ բոլոր իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերը, հետևաբար, երաշխավորության պայմանագրեր կնքելիս նրանք նույն թերացումներն են թույլ տալիս, ինչը և երաշխավոր ֆիզիկական անձինք՝ կրելով ռիսկերի նույն ծավալը: Եթե արդեն կնքել եք երաշխավորության պայմանագիր, ապա պետք է լինել հետևողական ինչպես սեփական, այնպես էլ պարտապանի ու պարտատիրոջ պարտավորությունների կատարման հարցերում, հնարավորության դեպքում անգամ ընթացիկ քայլերը համաձայնեցնել իրավաբանների հետ:

Այդուհանդերձ, պետք է միշտ հիշել, որ երաշխավորության պայմանագիրը առանց հետևանքների երաշխավորի համար լինել չի կարող և միշտ պատրաստ լինել նրան, որ հնարավոր է պարտապանը չմարի իր պարտքն ու պարտքի վերադարձը պարտատերը պահանջի երաշխավորից:

Hospitality Management Group

www.hmg.am

How to Make Your Hospitality Business Thrive

By Harout Baghdasarian

Hospitality service is no longer about simply selling products or technology. It's about creating happy and memorable moments for your guests by understanding their requirements. To present the highest possible service, individualized especially for them, you must go above and beyond the bar to find the common point between your company's standards and your guests' personal needs. By reflecting commitment, attention to detail and excellence in hospitality, you create an atmosphere where people are comfortable. They will want to return to your hotel, restaurant or any establishment that thrives on customer loyalty.

I believe that personal touches are what raise the level of a guest's experience to make it a unique one. What do I mean by personal? I mean the ability to understand your clients, to sense what they want, based on their perceived mood and personality traits, and to understand how to accommodate them in the moment. Your guest's needs may change from time to time, based on their mood, level of stress, fatigue and so forth. With this approach to the client-service provider relationship, total satisfaction and an optimal experience are ensured.

All successful hospitality businesses achieve success with proper, well-trained employees. What does that entail? When you start selecting and building your team, you need to cultivate your recruits and make sure they embody the following three basic traits: 1. Creativity, 2. Decision-making and 3. Updating.

1. Creativity

Creativity is important because you need to generate a special atmosphere for each guest. You need to understand their habits and body language just by talking to them. You need to notice what satisfies or dissatisfies your customers, and to empathize with them. Only then can you create a style of service based on your company's brand standards and customized for your individual guests' needs.

2. Decision-Making

Why is decision-making important? You may one day find that a special guest is in a special situation and you may need to take a quick decision to keep your guest happy. For instance, you overhear someone wishes your guest "Happy Birthday" in the lobby, and you immediately send her a cupcake with a lit candle. A small gesture like that will make a lasting impression on your guests and you will gain their loyalty. Then, they will go on to share their positive experience with others – word of mouth is a powerful marketing tool for your brand. Now imagine if you hadn't gone above and beyond what you think is required of hospitality, how would your guests talk about you to other potential customers?

3. Updating

The last but most important point is updating. Imagine a 1954 Formula One Mercedes trying to participate in a 2014 race! Sure, we can take part in the competition but of course we will be among the last to arrive at the finish line.

Now suppose you have a waiter who doesn't know how to print a Micros bill and the customer who is late for a business meeting is waiting around, wasting his valuable time because of your untrained waiter. You need to constantly be on top of every situation to ensure complete customer satisfaction. To achieve that, you need to update not only your quality of service and knowledge, but also continuously evolve and innovate to survive because there is never a final version to hospitality.

Hospitality service is the special relationship between you as a company brand and your employees and your guests. For some, the concept of impeccable service comes naturally, while for others it needs to be developed with training and constantly following up. Just remember that a well-trained hospitality team always leads to a successful business in service.


Successful Hospitality Business Pillar
Decision Makers
Creation
System Up-date
Organized Establishment
Well Trained Hospitable Team
Marketing
Customer Care
Organized Operation
Organized Financial Department
Vision
Standards & Policies
Priority Cost List
Logical & Reachable Targets
Market Analyses
Customer Care
Follow-up Management
Cost Turnover Formula
Internal
External
Profit & Lost
Up Selling Program
Daily Budget
Average Check
Customer Care
Well Trained Hospitable Team
Decision Makers
Creation
System Up-date
Successful Hospitality Business Pillar

UWC Dilijan College

UWC Dilijan College opens as a result of the vision and with the commitment and support of the RVVZ Foundation, created by philanthropists Ruben Vardanyan and Veronika Zonabend. Its aims are to promote the principles of international education, intercultural co-operation, innovation and sustainability in Armenia and the wider post-Soviet region, and to firmly connect our country to the world through education.

UWC Dilijan College's mission is to deliver a challenging and transformative educational experience for bright students from all over the world, inspiring them to create a more peaceful and sustainable future and underpinned by a generous scholarship program, which makes is possible for all selected students to attend the college regardless of their financial circumstances.

UWC Dilijan is a member of 14 United World College schools and colleges. UWC depends on the dedication and expertise of an active volunteer based network called national committees. National committees operate in more than 140 countries to recruit, select and prepare more than 1000 students every year to join our colleges, schools and short programs.

UWC Dilijan admits its first class of International Baccalaureate Diploma students, nominated by 50 UWC national committees, in 2014, and when at full capacity in 2023, it will accommodate 650 students aged 13-19. The approximate student composition is: 10% Armenian; 35% Eastern European; 35% Middle East and Africa; and 20% Rest of World. The International Baccalaureate (IB) offers high quality international education programme to more than one million students in 146 countries and is recognized by universities worldwide. The curriculum will be taught in English. In addition, a wide range of foreign languages and instruction in mother tongue and literature will be part of the curriculum. Armenian language and culture courses for the international students and staff will be offered.

John Puddefoot, the former Founding Head of the Aga Khan Academy in Hyderabad and Deputy Head of Eton College, took up his position as Head of UWC Dilijan in January 2014. In his words; "One of the convictions that binds the visions of our Founders, the UWC movement, and the International Baccalaureate together, is that investment in education of the highest quality is what holds out hope for justice, peace and prosperity. So we are investing in teaching and learning inside and outside the classroom to ensure that the experience of being at UWC Dilijan will transform and inspire all of us to make the most of our lives in service to our communities, our countries and the world."

The college reflects some of the deep roots of Armenian culture by drawing on its ancient traditions of

hospitality, respect for academic learning and strong family values. As a result, education at UWC Dilijan is based on shared living and learning, inquiry, collaboration, and intercultural understanding. Students learn by embracing each other's differences – economic, religious, social, and cultural – in a safe environment where those differences unite rather than separate.

UWC Dilijan's campus is set in a romantic 19th century town on the edges of a large national park in central Armenia. Its distinctive location in a diverse, culturally rich and complex region at the junction of the former Persian, Byzantine, Ottoman and Russian Empires, has inspired the college to interweave the ethos of experiential learning into its academic structure in a number of different ways.

As a town favoured by artists, composers and filmmakers for the beauty of its wooded hills, mineral waters and climate, in the Russian Empire and then the Soviet Union, in its heyday Dilijan was an intellectual, cultural and artistic hub. Today, the Armenian government has identified Dilijan as a priority area for re-development with the aim of establishing it as a regional educational, cultural and recreational centre. Local and international organisations, such as the Central Bank of Armenia, the TUMO centre for creative tech-

nologies and the IDEA Foundation, are investing in the city. The college forms an important part of the wider re-development programme within the local community, so each member of the college contributes to and feels responsible for the community and the environment they are shaping by their presence. As such, they gain first-hand experience and awareness of development and environmental issues, and of the challenges of achieving change in these areas.

UWC Dilijan's campus design seeks to foster an appreciation of the interconnectivity of the world and its shared resources. Its location next to the national park, the surrounding mountains and Lake Sevan is used to run a wide array of activities central to the college's outdoor programme, which focuses on ecosystem preservation, ecology and environmental ethics. UWC Dilijan is also built using "green" technologies: the campus includes elements such as "ecology pods" on the hillside above the college and "living green walls" on the main school buildings. Students are therefore inspired to engage in activities that contribute to fostering environmental sustainability at individual, local and institutional levels as a natural part of their campus life.

The curriculum at UWC Dilijan emphasizes the importance of developing collaborative skills and of creating teams that accomplish co-operative projects in a range of fields. Classrooms, laboratories and open learning spaces of the newly built campus are designed for collaborative learning, which allows students to move easily from individual research to group projects, and encourages them to support one another in their academic work. UWC Dilijan aims to be a model of education in the region, working together with other institutions and local organizations to realize the values of diversity, sustainability and peace through co-operation and action.

Students actively participate in or initiate cultural, social and environmental activities on and off campus. They contribute to fostering environmental sustainability, as they learn about farming, biodiversity, recycling through practical experience, and teach environmental education to younger schoolchildren.

Students go on orienteering, rock-climbing, sailing, skiing and hiking expeditions in the area while becoming familiar with and gaining a sense of responsibility for the natural environment. UWC Dilijan collaborates with various organizations raising environmental awareness through educational programs, film festivals, and cultural events involving the local community.

Students are also given opportunity to identify and develop their own service programmes by identifying local needs and opportunities. Examples of service learning include teaching English to local children, support for the elderly, improving local infrastructure, raising awareness about healthcare and working with children.

The Dilijan Bridge Project is an example of UWC Dilijan's outreach initiative: it aims to establish links between the host community and the college's international community by setting up collaborative service programmes driven by young people from Dilijan, Yerevan and the UWC community. The first lengthy meeting of the young people involved in this initiative took place during the UWC Short Summer course in social and environmental development in Dilijan in July 2013 and again in July 2014, and interaction with a newly-formed Dilijan youth volunteer programme is being implemented in 2014.

Since activities at UWC Dilijan are aimed at developing an international appreciation of each student's national identity and a deeper understanding of their host region, students are encouraged to share their own cultures through events such as "international days" and to embrace Armenian culture through acquiring some conversational Armenian, learning about Armenian history and culture, and participating in events that reflect Armenian traditions.

UWC Dilijan brings a UWC college to a part of the world from which the movement has been notably absent. The history of the region and its contemporary significance for international relationships make it a fascinating and stimulating place to live and study, and the richness of the natural environment offers incomparable opportunities to develop physical and environmental projects in the context of a curriculum that balances the highest academic standards with physically demanding and adventurous activities in an international community.

UWC Դիլիջանի քոլեջ

UWC Դիլիջանի դպրոցը հիմնադրվել է բարեգործներ Ռուբեն Վարդանյանի և Վերոնիկա Զոնաբենդի կողմից ստեղծված RVVZ հիմնադրամի կողմից, ձևակերպված տեսլականի, ցուցաբերած նվիրվածության և աջակցության արդյունքում՝ նպատակ ունենալով Հայաստանում և հետխորհրդային ավելի մեծ տարածաշրջանում նոր թափ հաղորդել միջազգային կրթության, միջմշակութային փոխգործակցության, երկրի արդիականացման և կայուն զարգացման ոլորտներում և նպաստել մեր երկիրը կրթության միջոցով աշխարհին ավելի սերտ միաձուլելու գործին:

UWC Դիլիջան քոլեջը անդամակցում է Աշխարհի Միացյալ Քոլեջների (UWC) 14 դպրոցների ու քոլեջների ցանցին: UWC-ի աշխատանքը մեծապես կախված է կամավոր հիմունքներով ձևավորվող ազգային կոմիտեների ցանցի անդամների փորձից և արհեստավարժությունից: Ազգային կոմիտեները գործում են ավելի քան 140 երկրներում՝

կատարելով տարեկան ավելի քան 1000 դիմորդների ընտրություն և նախապատրաստում մեր դրպոցներում ու քոլեջներում սովորելու, ինչպես նաև կարճաժամկետ կրթական ծրագրերին ներգրավվելու համար:

UWC Դիլիջանն այս տարի իր դռներն է բացելու Միջազգային Բակալավրիատի դիպլոմային ծրագրով ուսանել ցանկացող իր առաջին ուսանողների առջև, որոնց ցանկը ձևավորվել է UWC-ի 50 ազգային կոմիտեների կողմից: Նախատեսվում է, որ 2023 թ. քոլեջում ուսանելու է 13-19 տարեկան 650 աշակերտ ավելի քանի 50 երկրից: Ակնկալվում է սաների հետևյալ բաղադրությունը՝ 10%՝ Հայաստանից, 35% ՝ Արևելյան Եվրոպայից, 35% ՝ Միջին Արևելքից և Աֆրիկայից, 20% ՝ այլ աշխարհամասերից: Միջազգային Բակալավրիատը (IB) աշխարհի համալսարանների կողմից ճանաչվող միջազգային բարձրորակ կրթական ծրագիր է, որով ուսանում է 146 երկրի ավելի քան մեկ միլիոն աշակերտ: Այն դասավանդվելու է անգլերենով, սակայն ծրագրի մաս է կազմում ինչպես օտար լեզուների այնպես էլ մայրենի լեզվի ու գրականության ուսուցումը: Միջազգային ուսանողներին առաջարկվելու են հայոց լեզվի և մշակույթի դասընթացներ:

Հայդարաբադի Ագա Խան Ակադեմիայի նախկին հիմնադիր նախագահ և Իթընի քոլեջի փոխտնօրեն Ջոն Փադըֆութը 2014 թ. հունվարին ստանձնեց UWC Դիլիջանի քոլեջի տնօրենի պաշտոնը: Իր խոսքում նա նշել է. «UWC շարժման և առհասարակ Միջազգային բակալավրիատի հիմնադիրների միաձայն համոզմունքներից մեկն այն է, որ արդարության, խաղաղության և բարգավաճման հույս կարող է ներշնչել միայն բարձրագույն որակի կրթության գործում արվող ներդրումը: Այնպես որ, մեր ջանքերն ու ավանդը ներդնելու ենք ոչ միայն դասարանում, այլև դասարանից դուրս ուսուցմանը, որպեսզի վստահ լինենք, որ UWC Դիլիջանում լինելու փորձը կվերափոխի մեզ և ուժ կհաղորդի մեր կյանքը լավագույնս ծառայեցնելու սեփական հանրությանը, պետությանն ու աշխարհին»:

UWC Դիլիջան կրթահամալիրը տեղակայված է 19-րդ դարում հիմնադրված գողտրիկ մի քաղաքում՝ Դիլիջան ազգային պարկի հարևանությամբ: Պարսկական, Բյուզանդական, Օսմանյան և Ռուսական կայսրությունների հատման գոտում ընկած այս բազմազան, հարուստ մշակույթով դիրքը դպրոցին թույլ կտա փորձի վրա հիմնված ուսուցման էթիկան տարբեր ձևերով միահյուսել հաստատության ակադեմիական կառուցվածքին:

Դիլիջանն աչքի է ընկնում որպես արվեստագետների, կոմպոզիտորների և ռեժիսորների կողմից սիրված քաղաք՝ հարուստ անտառապատ միջավայրով, հանքային ջրերով և մեղմ կլիմայով: Ներկայումս Հայաստանի կառավարությունը Դիլիջանը ճանաչել է որպես առաջնահերթ զարգացման տարածք՝ նպատակ ունենալով վերափոխելու այն տարածաշրջանային կրթական, մշակութային և հանգստի կենտրոնի: Քաղաքում ներդրումներ են կատարում տեղական և միջազգային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՀՀ Կենտրոնական Բանկը, Ստեղծարար տեխնոլոգիաների «Թումո» կենտրոնը և IDeA հիմնադրամը: Դիլիջանի դպրոցը տեղական համայնքի ավելի լայն զարգացման ծրագրի մաս է, ուստիև դպրոցի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն է ունենալու համայնքային զարգացման և անմիջական մասնակցություն է ունենալու դրա ձևավորման գործընթացում:

UWC Դիլիջան քոլեջը կնպաստի աշխարհի և նրա ընդհանուր բարիքների նկատմամբ հոգատար վերաբերմունք սերմանելուն: Ազգային պարկի հարակից տարածքում գտնվելու փաստը, շրջակա լեռներն ու Սևանա լիճը

քոլեջի արտադպրոցական ծրագրերի համար առանցքային նշանակություն կունենան: Ավելին՝ UWC Դիլիջանը կառուցվել է «կանաչ» տեխնոլոգիաների կիրառությամբ, որն հենց առաջին հայացքից ակնհայտ է դառնում դպրոցի «շնչող կանաչ պատերից»:

UWC Դիլիջանի կրթական ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնում փոխգործակցային հմտությունների զարգացմանը և զանազան ոլորտներում համատեղ նախագծեր իրագործելու ունակ թիմերի ստեղծմանը: Նորակառույց կրթահամալիրի լսարանները, լաբորատորիաները և ուսումնական բացօթյա տարածքները նախագծվել են փոխգործակցային ուսուցումը հեշտացնելու նպատակով, ինչը անհատական ուսումնասիրությամբ զբաղված աշակերտներին թույլ կտա հեշտորեն անցնելու խմբային նախագծերի քննարկմանը և կքաջալերի օժանդակելու միմյանց ուսմանը: UWC Դիլիջանը նպատակ ունի դառնալու տարածաշրջանում կրթության մոդել ու չափանիշ: Այն համագործակցում է տարբեր հաստատությունների և տեղական կազմակերպությունների հետ բազմազանության, կայուն զարգացման և խաղաղության արժեքները փոխադարձաբար և ակտիվ քայլերի միջոցով իրականություն դարձնելու համար:

Համալիրի տարածքում կամ դրանից դուրս աշակերտներն ակտիվորեն նախաձեռնելու են մշակութային, սոցիալական և բնապահպանական ուղղվածության գործունեություն և մասնակցելու են դրան: Գյուղատնտեսության, կենսաբազմազանության, վերամշակման մասին սովորելիս կամ սովորեցնելիս նրանց մեջ սեփական փորձի հիման վրա վերաբերմունք է ձևավորվելու շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ:

Ուսուցման ընթացքում աշակերտները սպորտային կրթության լայն հնարավորություն կունենան, բացի այդ կմասնակցեն ժայռամագլցության, առագաստանավության, դահուկասահքի և լեռնագնացության արշավների՝ ծանոթանալով բնական միջավայրին և ձեռք բերելով պատասխանատվության զգացում դրա նկատմամբ:

Աշակերտները հնարավորություն կունենան տեղական կարիքների և միջոցների վերլուծության միջոցով կազմել և մշակել ծառայությունների մատուցման սեփական ծրագրեր: Որպես օրինակ կարող են լինել տեղի երեխաներին անգլերենի ուսուցման խմբակներ, ծերերի խնամքը, տեղական ենթակառուցվածքների զարգացումը, առողջապահական գիտելիքների տարածումը և երեխաների հետ աշխատանքը:

Դիլիջանի Կամուրջ նախագիծը UWC Դիլիջանի սոցիալական օժանդակության հերթական նախաձեռնություններից է: Այն նպատակ ունի Դիլիջանի, Երևանի և UWC-ի երիտասարդների կողմից ծառայությունների մատուցման համագործակցային նախագծերի օգնությամբ կապ ստեղծել հյուրընկալող համայնքի և դպրոցի միջազգային հանրության միջև:

UWC Դիլիջանը կնպաստի յուրաքանչյուր աշակերտի ազգային ինքնության գնահատմանը և հյուրընկալող տարածաշրջանի խոր ընկալմանը: Պարբերական բնույթ կրող “Միջազգային օրեր” միջոցառման շրջանակներում աշակերտները հնարավորություն կունենան կիսվել սեփական մշակույթով, ինչպես նաև ծանոթանալ հայկական մշակույթին՝ հայկական ավադույթներն արտացոլող միջոցառումներին մասնակցելու միջոցով :

UWC Դիլիջանը հիմնադրվեց այնտեղ, ուր այդ շարժումը բացակայում էր: Տարածաշրջանի պատմությունը և միջազգային հարաբերություններում դրա արդի կարևորությունն այն դարձնում են ապրելու և ուսանելու համար բացառիկ ոգեշնչող տեղանք, իսկ բնական միջավայրի հարստությունն ու բազմազանությունը անգերազանցելի հնարավորություններ են ընձեռում տարաբնույթ նյութական և բնապահպանական նախագծեր կյանքի կոչելու համար, և այդ ամբողջը՝ մի կրթական ծրագրի շրջանակում, որը բարձրագույն ակադեմիական չափանիշները համակշռում է բազմազգ միջավայրում ֆիզիկապես ակտիվ և արկածախնդրությամբ լի գործունեության հետ:

Interview with International Center for Agribusiness Research and Education (ICARE) Director Mr. Vardan Urutyan

- Dr. Urutyan, what is so special about the ATC that makes this school different from other education institutions in Armenia?

- It is the Agribusiness Teaching Center's western structure of education, English as the instruction language, and western values shared by every single member of ATC family that makes ATC different from others in Armenia and in the region. Established in 2000, the ATC has grown to become an important regional agribusiness higher education institution, with students from Armenia, Georgia, and other countries; talented Armenian and American instructors holding graduate degrees from leading U.S. and European universities; international and local research opportunities for faculty and students; recognition by domestic and foreign partners as an international center of teaching and learning excellence, and the latest learning facilities and tools. The ATC has its own brand in the labor market in Armenia, Georgia, and a number of other countries. Over 90 percent of ATC graduates get high-paying jobs within the first 2-3 months after graduation.

- ATC started its Master degree program in December 2010; what are some of the advantages the program has to suggest to its potential students?

- Our Master of Agribusiness (MAB) curriculum is based on the Texas A&M University's respective program, like it is the case with the ATC undergraduate curriculum. The MAB is a modern, internationally competitive business-oriented program with a strong quantitative component. Given the high level of instruction, the tuition is nearly half the tuition of other similar programs in the region. The student-centered learning environment, cutting-edge technologies, flexible class schedule, the latest textbooks and subscriptions, assistance to graduates in their further doctoral studies in the U.S and Europe after graduation make MAB a place where one can get an international quality education without having to leave the country. Finally, the friendly environment and the open-door policy are no less important for our students to feel committed to the ATC principles and values. It is not without reason that the share of graduates from other Armenian universities among the MAB applicants is growing each year.

- ATC is known also as a regional agribusiness and agricultural research center. How important is this component?

- Actually, ATC is an integral part of ICARE – International Center for Agribusiness Research and Education. It is the Research and Outreach Development Center, another component of ICARE, that is involved in local and international research projects. The results of researches are made available to farms, agribusinesses, education institutions and other stakeholders, as well as widely presented to the international research community. Rating of our research partners worldwide indicates ICARE's role as a well-established and reliable international research center. I am pleased to state that about 25 percent of ATC students are involved in ICARE's research activity.

- Any new initiatives currently underway that can be of interest for our readers?

- Jointly with Semina Consulting, we have recently established yet another component of ICARE – Yerevan (EVN) Wine Academy. This initiative caught the wave of increasing interest, demand and appreciation of wine among the Armenian society. EVN is a wine education excellence center and a platform for structured and recreational learning about winemaking and wine business. EVN has launched short-term courses, as well as a 2-year Enology & Wine Business program for wine enthusiasts and professionals.

- Thank you, Dr. Urutyan, for sharing information on the commendable activity of ATC and ICARE.

- Thank you for this opportunity.

Հարցազրույց Ագրոբիզնեսի հետազոտությունների եւ կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի տնօրեն պարոն Վարդան Ոհռուտյանի հետ

- *Դոկտ. Ուռուտյան, Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնն ինչ առանձնահատկություններով է տարբերվում Հայաստանի կրթական այլ հաստատություններից:*

- Ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը տարբերվում է կրթության արևմտյան կառուցվածքով, դասավանդման լեզվով, որ անգլերենն է և, որ կարևորն է, արևմտյան արժեքներով, որի կրողն է ԱՈՒԿ-ի ընտանիքի յուրաքանչյուր անդամ: Չնայած ոչ մեծ կենսագրությանը (հիմնադրվել է 2000թ.-ին), Կենտրոնն այսօր ագրոբիզնեսի ոլորտի բարձրագույն կրթություն տվող տարածաշրջանային նշանակության հաստատություն է, որտեղ սովորում են հայ, վրացի և այլ երկրներից եկած ուսանողներ: Դասախոսները գիտական աստիճաններ են ստացել ԱՄՆ և Եվրոպայի առաջատար համալսարաններից: Կենտրոնի դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն լուրջ հետազոտական աշխատանքներով զբաղվելու: ԱՈՒԿ-ը թե հայրենական և թե միջազգային մեծաթիվ գործընկերների կողմից ընդունված և ճանաչված է որպես դասավանդման և ուսումնառության գերազանցության միջազգային կենտրոն՝ իր արդիական տեխնիկական հնարավորություններով ու գործիքներով: ԱՈՒԿ-ն ունի իր ապրանքանիշը Հայաստանի, Վրաստանի և մի շարք այլ երկրների աշխատաշուկաներում: Շրջանավարտների ավելի քան 90 տոկոսը բարձր վարձատրվող մասնագիտական աշխատանք է գտնում ավարտելուց արդեն 2-3 ամիս անց:

- *ԱՈՒԿ-ի մագիստրոսական ծրագիրը բացվեց 2010թ. դեկտեմբերին. ծրագիրն ինչ առավելություններ է առաջարկում իր պոտենցիալ ուսանողներին:*

- Ագրոբիզնեսի մագիստրոսական (MAB) ծրագրի ուսումնական պլանը, ինչպես և բակալավրիատի ծրագրի դեպքում է, հիմնված է ԱՄՆ Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի համապատասխան ծրագրի ուսումնական պլանի վրա: MAB-ը ժամանակակից, միջազգայնորեն մրցունակ գործարար ուղղվածություն ունեցող ծրագիր է[a] ուժեղ քանակական բաղադրիչով: Դասավանդման բարձր մակարդակի համեմատ ուսման վարձը անհամարժեքորեն ցածր է: Ուսումնառության ուսանողակենտրոն միջավայրը, առաջավոր տեխնոլոգիաները, ճկուն դասացանկը, նորագույն դասագրքերն ու գիտական ամսագրերը, ավարտելուց հետո ԱՄՆ-ում և Եվրոպայում ասպիրանտական կրթություն ստանալու գործում օժանդակությունը մեր մագիստրոսական ծրագիրը դարձնում են մի հաստատություն, որտեղ կարելի է ստանալ միջազգային որակի կրթություն՝ առանց հարկադրված լինելու հեռանալու երկրից: Վերջապես, ԱՈՒԿ-ի սկզբունքներին և արժեքներին հավատարիմ մնալու առումով պակաս կարևոր չեն բարյացակամ մթնոլորտը և բաց դռների քաղաքականությունը: Նաև սա է պատճառը, որ այլ համալսարաններից եկած ուսանողների տեսակարար կշիռն ավելանում է տարեց-տարի:

- *ԱՈՒԿ-ը հայտնի է նաև որպես գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտների տարածաշրջանային հետազոտական կենտրոն: Որքանո՞վ եք կարևորում այդ բաղադրիչը:*

- Ըստ էության, ԱՈՒԿ-ը Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ԱՀԿՄԿ/ICARE) հիմնադրամի մաս է կազմում, ընդ որում հետազոտություններով զբաղվում է հիմնադրամի մեկ այլ բաղադրիչ՝ Հետազոտական և արտաուսումնական աշխատանքների կենտրոնը, որն ակտիվորեն ներգրավված է տեղական և միջազգային հետազոտական նախագծերում: Հետազոտությունների արդյունքները տրամադրվում են ֆերմերային տնտեսություններին, ագրոբիզնեսի ձեռնարկություններին, կրթական հաստատություններին և շահագրգիռ այլ կողմերի, ինչպես նաև, որ շատ կարևոր է, լայնորեն ներկայացվում են միջազգային գիտական հանրության ուշադրությանը: ԱՀԿՄԿ-ի՝ որպես

կայացած և հուսալի միջազգային հետազոտական կենտրոնի, դերի մասին է վկայում մեր գիտական գործընկերների համաշխարհային վարկանիշը: Ուրախությամբ եմ նշում, որ ԱՈՒԿ-ի ուսանողների մոտ 25 տոկոսին ներգրավում ենք հետազոտական աշխատանքերում:

- *Ներկայումս ունե՞ք նոր նախաձեռնություններ, որոնք կարող են հետաքրքրել մեր ընթերցողներին:*

- Մեր կազմակերպությունը Սեմինա Քոնսալթինգ ընկերության գործակցությամբ, վերջերս ստեղծել է ևս մեկ բաղադրիչ՝ Երևանի (Ի-Վի-Էն) գինու ակադեմիան: Կարծում եմ, այս նախաձեռնությունը ճիշտ ժամանակին ի հայտ եկավ այն առումով, որ հայ հասարակության մեջ, բարեբախտաբար, սկսել է աճել գինու հանդեպ հետաքրքրությունը, պահանջարկը և գնահատանքը: Ի-Վի-Էնը գինեգործական կրթության գերազանցության կենտրոն է և գինեգործության և գինու բիզնեսի կառուցվածքային և ժամանցային հարթակ: Ի-Վի-Էնը տվել է վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների մեկնարկը, իսկ առաջիկայում կմեկնարկի "Գինեգործություն և գինու բիզնես՝ երկամյա ուսումնական ծրագիրը գինեսերների և գինու մասնագետների համար:

- *Շնորհակալություն, դոկտ. Ուռուտյան, մեր ընթերցողներին ԱՈՒԿ-ի և ԱՀԿՄԿ-ի դրվատանքի արժանի գործունեությանը հաղորդակից դարձնելու համար:*

- Շնորհակալություն այդ հնարավորությունն ընձեռելու համար:

AmCham Gold Members

AmCham Members by Sector

Banking & Insurance

Ameria
ArmSwissBank
Byblos Bank Armenia
FINCA
First Mortgage Company
Good Credit
HSBC Bank Armenia
Ingo Armenia Insurance
Resolution Apahovagrakan Broker
Rosgosstrakh-Armenia
Unibank

Business & Financial Services

Alpha Plus Consulting
Amber Capital
AN Audit
Armenbrok
Baker Tilly Armenia
Booz Allen Hamilton
Business Support Center
Concern Dialog
Deloitte Armenia
EY
Grant Thornton
KPMG
Legelata
Nasdaq OMX
PwC Armenia
Prudence

Consumer Goods

Arsoil
Artsakh Brandy
British-American Tobacco
Coca-Cola HBC Armenia
Fora
Imperial Tobacco
Japan Tobacco International
Mary Kay
Megerian Carpet
Oriflame Armenia
Pepsi-Cola Bottler Armenia
Philip Morris Armenia LLC

Energy & Mining

Armenian Copper Program
Deno Gold
GeoProMining Group
Geoteam

Information Technologies

Apaga Technologies
Fine
Hylink
LTX-Credence Armenia
Mentor Graphics
Microsoft
National Instruments
OSG Records Management
Studio One
Synergy International Systems
Synopsys Armenia
Unicomp

Infrastructure Development

Atlas Copco
RENCO S.P.A.
Zeppelin Armenia

Marketing & Promotion

Deem Communications
McCann Erickson
Mineh Printing Company
Publicis Hepta Armenia
Stolte

Moving & Transportation

Fedex
Globalink
Gosselin Yerevan
Unitrans

NGOs & International Organizations

Armenia Tree Project Charitable Foundation (ATP)
Center for Agribusiness and Rural Development (CARD)
Children of Armenia Fund (COAF)
Fund for Armenian Relief of America (FAR)
Habitat for Humanity Armenia
IDeA Foundation
International Center for Agribusiness Research and Education (ICARE)
Pragma Corporation Armenia Branch
United Nations Children's Fund (UNICEF)
World Vision Armenia

Tourism & Hospitality Services

Armenia International Airports
Armenia Marriott Hotel Yerevan
Austrian Airlines
Best Western Congress Hotel
Etihad Airways
Hospitality Management Group (HMG)
Jazzve
Levon Travel
Tufenkian Hospitality

Miscellaneous / Other

Armobil Security Service
GSK Representative Office
LUXURY
Pantera Security Agency

AGRIBUSINESS

Master of Agribusiness

ICARE

Teryan 74
Tel.: 010 52 28 39
info@icare.am
icare.am

We Develop Leaders for Agribusiness Industries

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՍԿՈ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ԿԱՍԿՈ
ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ
ՎՃԱՐՈՒՄ ԵՔ 25%-Ը

ԱՊՊԱ
եթե ԱՊՊԱ, ապա ԻՆԳՈ

ԲԺՇԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«M2M» հատուկ առաջարկներ

ИНГОАРМЕНИЯ
IngoArmenia
ՎՃԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԻՇՏ*

*ՀԱՄԱՁԱՅՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51, 53,
Հեռ.՝ +374 (10) 59 21 21
էլ. փոստ՝ info@ingoarmenia.am
Կայք՝ www.ingoarmenia.am